Ավետիք Իսահակյան

Պարզըկա գիշեր

- Պարզըկա գիշե՞ր…
Աստղերն երկնքում լուռ պսպղում են,
Շողերը լուսնի դիպել են սարի
Ձյունոտ կողերին – կողերը ցոլում,
Պեծին են տալիս:

Քամին ցրտաշունչ
Թևերը փռած փնչում է, թոչում,
Երկիրը սառած ճաքում-ճաքճքում,
Ձյան հատիկներով կուրծքը քարափի
Ծեծում ու ծեծկում…

Անծա՞յր ճանապարհ…
Առա՞ջ եմ գնում – ո՞ւր, - ես չըգիտեմ,
Սառո՞ւյց ու ձմե՞ռ.
Առաջ եմ գնում անհո՛ւյս, անընկե՛ր,
Քամի ու գիշե՛ր…
- Ա՞խ, եթե հանկարծ հույսըս շողշողար, -

Նա ինձ ողջունե՞ր…

1892
Թիֆլիս